

Վիկտորյա Վասիլյան, Էդգար Ասկիջյան

ՎԱԼԵՆՏԻՆ ՊՈՂՊՈՍՈԳՈՎԻ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐՈՎ ԳԵՂԱՆԿԱՐՆԵՐԸ

Բանալի բառեր - Կոմիտաս, Արցախ, Սունգայիթ, կոտորած, քավության նոխագ, Տիրամայր, Զվարթնոց, երկրաշարժ, ռեքվիեմ, Աստված:

Պողպոմոգովը հայ նկարիչ է: Սակայն սահմանափակվել այս բառով նույնն է, թե տիեզերագնացին բնութագրելու համար միայն ասել, որ նա թռչում է: Բանն այն է, որ Պողպոմոգովին հաջողվում է միաժամանակ լինել դիզայներ, մուլտիպլիկատոր, ֆիլմերի գեղարվեստական ղեկավար, քանդակագործ, ճարտարապետ և, իհարկե, գեղանկարիչ: Այդ պատճառով մեծ զարմանք է առաջացնում այն հանգամանքը, որ նա կրթություն չի ստացել: Նրա ուսուցիչը կյանքն է եղել:

Կտավները հիացնում են մտքի ու թեմաների բազմազանությամբ և վարպետությամբ: Նրա կտավները այնքան յուրօրինակ են, որ ականայից մտածում ես ոչ-թե այն մասին, որ դա հնարավոր է, այլ վստահ ես, որ դա կա՝ իրականություն է: Ընդ որում, հենց դա է Պողպոմոգովի արվեստի սկզբունքը: Եթե հարցնենք, թե ինչպիսին պետք է լինի մշակույթը ըստ նրա՝ ապա նա կպատասխանի՝ «համոզիչ»¹:

Վալենտին Պողպոմոգովի արվեստում, ինչպես Երվանդ Քոչարի, Ռուբեն Ադալյանի մի շարք գործերում, գեղարվեստական ինքնատիպ լուծումներ է ստացել, գրոտեսկային լեզվով, պլաստիկական հակիրճ, էքսպրեսիվ ու պարադոքսալ «բանաձևերով» արտահայտվող ուղղությունը, որը 1960-1980-ական թթ. հայ նկարչության մեջ ոճական ու կերպարային ուրույն դրսևորումներ է ունեցել այդ տարիներին ստեղծված պողպոմոգովյան «Նոստալգիա»-(1974թ.), «Պայքար»-(1978թ.), «Ռեքվիեմ»-(1981թ.), «Իմ մեղքը»-(1982թ.) կտավներում²:

Պողպոմոգովի աշխատանքներից քչերն են ցուցադրվում թանգարաններում, սակայն դրանցից յուրաքանչյուրի մասին շատ երկար կարելի է խոսել: Պողպոմոգովի կտավները միտքը խթանելու ունակություն ունեն: Այդուհանդերձ, կերպարվեստը նրա միակ կիրքը չէ: Ինչպես նկարիչն է խոստովանել, նա անչափ սիրել է կինոն, սակայն եթե ամեն ինչ սկզբից սկսելու հնարավորություն ունենար, ապա կզբաղվեր թատրոնով: Կինոյում, ըստ նրա կարծիքի, գերակշռում են տեխնիկական միջոցները, իսկ թատրոնում՝ ստեղծագործական մասը: Նա ստեղծագործական մեծ ոգևորությամբ

¹ Տե՛ս Газета «Урагу», № 5(60), апрель, 1994г.:

² Տե՛ս Ա.Աղասյան, Հայ կերպարվեստի զարգացման ուղիները 19-20 դարերում, Եր., 2009, էջ 166-189:

մասնակցել է Վարդան Աճեմյանի ու Յրաչյա Ղափլանյանի ստեղծած ներկայացումների բեմադրմանը: Նրան վիճակված էր մեծ դեր խաղալ նաև 20-ամյա լճացումից հետո հայկական մուլտարվեստի վերածննան գործում:

Վալենտին Պողոպոսյանը լինելով բացառիկ հայրենասեր մարդ և նկարիչ՝ իր աշխատանքներում հաճախ է անդրադարձել հայերի հետ կապված իրադարձություններին: 1988թ. փետրվարին Սումգայիթում տեղի ունեցած հայերի ջարդերը նրան ևս չէին կարող անտարբեր թողնել: Այս դեպքերին է նվիրված «Սումգայիթյան տիրամայր» աշխատանքը (տե՛ս Նկ. 5):

Այս աշխատանքի առաջին տարբերակը գողացվել է, որից հետո Պողոպոսյանը նկարել է երկրորդ տարբերակը: Այն նույնպես արժանացել է առաջինի ճակատագրին: «Սումգայիթյան տիրամայր» կտավում նա ներկայացնում է քրիստոնեական աստվածամոր պատկերը՝ կնոջ կերպարով Հայաստանի անձնավորմամբ: Կենտրոնական մասում պատկերված է Կասպից ծովի ափեզրով քայլող տիրամայրը, սև քողով և հանդերձանքով: Նա միայնակ քայլում է բոսոր մայրամուտին: Նրա գլխավերևում սրբազան մարտիրոսի լուսապսակ է: Գետինը քարքարոտ է՝ ոչ հարթ, ինչը վկայում է նրա անցած ծանր ուղու մասին: Նրա վիշտը ակնհայտ երևում է նաև սև քողի տակ թաքնված աչքերում և ծովը նետված սպանվածների դիակների միջոցով: Գունային որոշմամբ արվեստագետը փորձել է ընդգծել տիրամոր սուգը: Հագին պատռված հագուստ է: Կինը ողբում է: Ձեռքերին նայելիս նկատում ենք, որ մի բան պակասում է՝ մանուկ Քրիստոսը...նրան սպանել են: Նա չկա, բայց ձեռքերը պահպանում են նրա ջերմությունը և ուրվագիծը: Իսկ այն հատվածում, որտեղ պիտի լիներ նորածնի գլուխը՝ հրեշտակի լուսապսակ է: Ակներև է, որ այստեղ հեղինակը այլաբանական իմաստ է դրել՝ հայրենի հոշոտված ազգին կապելով տիրամոր ձեռքից խլված և խաչված մանկան ապագա ճակատագրին: Հարազատ ժողովուրդը ցեղասպանվեց միայն այն բանի համար, որ հայ էր և քրիստոնյա: Մանկան ճակատագիրը և անմեղ նահատակների բախտը համանման են, երկուսն էլ «Քավության նոխազ» դարձան: Կնոջ ձեռքում մոմ է վառվում: Բայց այստեղ մոմը վերածնունդ չի խորհրդանշում, այլ վառվում է անմեղ զոհերի հոգու հանգստյան համար: Տիրամոր այլայլված և տառապյալ դեմքը այնքա՛ն վիշտ է կրում, բայց այնքա՛ն ներում...

Վալենտին Պողոպոսյանին մեծ ցավ և վիշտ է պատճառել 1915 թ.-ի Հայոց եղեռնը: Իր արվեստում նա բազմիցս անդրադարձել է ցեղասպանությանը: Այս թեմայով ամենամեծ կտավը «Ռեքվիեմ»-ն է (տե՛ս նկ. 7): Այս կտավով նա մեզ է հաղորդում թուրքերի կողից Արևմտյան Հայաստանը հայաթափելու և հայերին բնաջնջելու հետևանքները: Արվեստագետը օգտագործել է կանաչ և մոխրագույն գունապնակ: Կենտրոնական հորինվածքում ընկած է եկեղեցական կիսավեր զանգ, որը, անշուշտ,

արձագանքում է Պարույր Սևակի «Անլռելի զանգակատուն» պոեմին: Ջանգը հնչեցնում է ցեղասպանության զոհերի հոգու ձայնը: Ջանգի ետնամասում խաչածն լույս է առկայծում, որը ճեղքում է մռայլ, սև ամպերը՝ բացելով «Երկնային պատուհանը», գալիք հույսը: Հետնամասում պատկերված է մի կիսավեր եկեղեցի: Մռայլ երկինքը ծանր նստել է հողի վրա: Ամբողջ հատակով սփռված են խաչքարերի բեկորներ, որ հիշեցնում է հայ ժողովուրդը՝ եղեռնից հետո սփռված աշխարհով մեկ: Այդպես, 1915-ին, թուրք ենիչերիների բիրտ ու անասնական ուժի դիմաց հայտվեց իր խաղաղ աշխատանքով իր պատմական հողի վրա ու պատմական հայրենիքում ապրող մի ողջ ժողովուրդ՝ մայր ու մանուկ, ծեր ու երեխա, կին ու տղամարդ. Այդպես՝ աննկատելիորեն ցեղասպանության ողբերգությունը դուրս է գալիս կտավից և տարածվում է մարդկանց հոգիների և գիտակցության մեջ: Նկարիչը կարողացել է արտահայտել իր ժողովրդի ապրած ողբերգության ընդհանրական պատկերը և արտահայտել իր ներքին ցավը խորհրդանշական եղանակով:

«1988 թ-ի երկրաշարժ»-ը կտավում ավերակներ են, փոշի (Տե՛ս նկ. 8): Արևը խավարել է: Այն տեսանելի չէ փոշու ու ծխի սյունների հետևից: Մինչդեռ երկիրը ողբում է: Հայոց աշխարհը գլխին սև քող է գցել: Նկարիչը որպես Հայաստանի ողբերգության խորհրդանիշ այստեղ ներկայացրել է Մարիտիրոս Սարյանի կտավը, որի մի մասը ծածկված է կտորով. Հայաստան աշխարհին դաժան սուգ է պատել: Այդուհանդերձ, վերածնունդը հնարավոր է: Կտավի փոքրիկ լույսերն են վերածնելու կյանքը: Անգամ այդ սև զանգվածում չեն մարում գույները, հակառակը՝ փայլում են նոր երանգներով՝ անկախ ամեն ինչից: Վ. Պողոպոնոգովի կտավներում առկա էր մեր հայ ժողովրդի պատմության ցավը, այդ գաղափարը կարելի է սահմանել որպես «հայ ժողովրդի կենսունակության և տոկունության վկայություն»:

«Արցախ» կտավի կենտրոնական մասում նկարիչը պատկերել է վեր խոյացող մի խաչքար, որը երկինք է տանում երկրագնդից «պոկված» մի երկրամաս՝ «Արցախ աշխարհը» (Տե՛ս նկ. 9): Պողոպոնոգովը այս կերպ փորձել է արտահայտել փոքր տարածքի, սակայն մեծ հավատի ուժը առ Աստված: Կտավում, ինչպես նաև նկարչի մի շարք այլ աշխատանքներում առկա են վառվող մոմերը, որոնք լույսի և հավատի խորհրդանիշ ասես լինեն Սուևգայիթյան ջարդերից հետո: Խաչքարը ամբողջությամբ երկնային լույսով է ողողված: Արևի շողերը ճեղքելով խաչը՝ լույս են սփռում Արցախ երկրի վրա: Ակամայից հարց է ծագում, ինչու՞ է վարպետը «Արցախը» ներկայացրել օդում ճախրող: Սա Ղարաբաղի ճակատագրի այլաբանական ներկայացումն էր (որը Ինքնավար մարզից 1991թ.-ի դեկտեմբերի 10-ին վերածվեց Լեռնային Ղարաբաղի անկախ հանրապետության), բայց մինչև օրս էլ մնում է որպես օդից կախված խնդիր և Հայաստանի ու Ադրբեջանի միջև պայքարի թատերաբեմ:

«Յորովել» նկարում արվեստագետը կարծես մի ամբողջական ֆիլմի նկարած լինի Կոմիտասի «Յորովել» երգի մասին և «Քարերի երկիր Յայաստանի» տիրոջ՝ հայի բնութագրի մասին (Տե՛ս նկ. 3): Նա պատկերել է մռայլ, քարքարոտ և ամայի հողի վրա պայքարող երկու հզոր եզների, որոնք կարծես անտեսելով ծանր և ավերակների վերածված երկրի վիճակը՝ առաջ են տանում մշուշի մեջ կորած, անտեսանելի գութանը, որի օգնությամբ ավերակների վրա պիտի նոր սերմեր սերմանվի: Կտավը կարծես «Ռեքվիեմ» նկարի յուրովի շարունակությունը լինի, որտեղ պատկերված է ավերակների վերածված ու լքված սուրբ հող, իսկ այս նկարում արդեն ավերակների վրա նորը կառուցող երկիր: Ինչպիսի դժվարությամբ էր տրվում հային իր ամենօրյա ապրուստը, ինչ քրտնաջան աշխատանքով էր հայը վաստակում իր կերակուրը, «քարից էր քանում իր հացը»: Այսպիսին է եղել հայ ժողովրդի կյանքի անցած ճանապարհը, կտավին նայելիս ականայից հիշում ենք նկարչի կողմից սիրված Դերենիկ Դեմիրճյանի խոսքերը՝ հայի նկարագրի մասին. «...թվով ամենափոքրը՝ տառապանքով ամենամեծը, ժամանակով ամենահինը՝ վիճակով ամենից անփոփոխը, անփոփոխը, անփոփոխը...Ամենից աննպաստը իր երկրի դիրքն էր, ամենից համառ ու ամուր կառչեց իր երկրից: Որքան անհույս է թվում ապագան, այնքան հայը չի հուսահատվում: Ասենք հայը իր կյանքում երկու բան չտեսավ. հայը մեկ բախտ չտեսավ, մեկ էլ հուսահատություն: Դե հիմա ինչպես չափես, ինչպես ճանաչես հային. հայի չափը չափազանցն է...»

Դուք երբևիցե տեսել եք տաժանակիր աշխատանք կատարող հայի: Մեջքին մի սար բեռ, ճկում է, մեջքը կոտրում. դու չես կարող հասկանալ այդ հայը աշխատանք է կատարում, թե ինքնախորտակում: Ու՞մ դեմ է այդպես չարացել, որ ինքն իրեն է պատժում...

Ինչու՞ է այդպես, ինչի՞ց է դժգոհ, ի՞նչ է կամենում, ինչու՞ է մեկուսանում, առանձնանում, որպեսզի նյութի՞, դավի՞, վնասի՞...ո՛չ, հազար անգամ ո՛չ: Ուզում եք իմանալ հայի ամենամեծ առաքինությունը. ամեաներողամիտ ցեղն այս աշխարհում: Ո՞վ էր ամենից շատ ջանում արդարացնել իրեն ջարդողներից՝ հայը: Ջարդի՞ր ինձ, ասում էր, ահա քո պատիժը և իմ վրեժը:

Ինձ թվում է հայի սրտի խորքում շատ խորը թաքնված վիրավորանք կա: Դարերից եկած վիրավորանք, արծվի վիրավորանք է, որին ցած են բերել բարձր լեռներից, գցել ցեխի, կեղտի մեջ ու թևերը կոտրել...ոչինչ չեն ուզում ձեզնից. ձեզ լինի ձեր երջանկությունը, ձեր ուրախությունը, եթե սիրում եք կյանքը՝ ապա ես սիրում եմ կյանքից առավել թանկ մի բան՝ դարերով կորցրած իմ ազատությունը: Արդյոք ինչ որ բան հասկացա՞ք հայից...Երևու՛յթ»:

«Տիրամայր» կտավում հեղինակը պատկերել է բոլորին քաջածանոթ աստվածաշնչյան մի տեսարան՝ տիրամորն ու մանկանը (Տե՛ս նկ. 1): Ամնիջապես աչք

են զարնում հայկական ազգային տարրերը: Տիրամոր հետևում երևում է խաչքարը՝ հայկական եկեղեցուն բնորոշ պատերը: Աջ կողմում դրված է հայկական արվեստի անբաժանելի մաս կազմող նուռը, իսկ մանկան ձեռքում հայ արվեստի և քրիստոնեության մեկ այլ խորհրդանիշ է՝ խաղողի վազը: Տիրամոր ոտքերի մոտ վեր են բարձրանում խաղողի տերևներ: Ուշադրության է արժանի նաև տիրամոր հագուստը. այն իր տեսքով կարծես թե հիշեցնում է հայկական տարազը, իսկ երանգներով՝ հայկական որդան կարմիրը: Այսպիսով, պատկերել է համայն քրիստոնյաների համար հոգեհարազատ տեսարան՝ զուտ հայկական տարրերով ու դրան հաղորդել հայկական ազգային շունչ:

«Իմ մեղքը» կտավը պողպոմոգովյան մտածելակերպի յուրօրինակության կնիք է կրում (ՏԵ՛ս Նկ. 4): Նկարիչը ներկայացնում է մարդկության քաղաքակրթության արժեքները՝ մայաների մշակութից մինչ Եգիպտոս, Բաբելոնյան աշտարակ և ժամանակակից Նյու-Յորքյան երկնաքերերը: Կտավը ստեղծել է 1983թ.-ին այն ժամանակ, երբ պատերազմի վտանգը ակտուալ էր: Վալենտինը կարծում էր, որ Երրորդ համաշխարհային պատերազմի դեպքում կկիրառվի միջուկային ռումբ, որը կվերացնի կյանքը երկրագնդի երեսից, կմնան այս բոլոր արժեքավոր կառույցները և առնետները կտիրանան այս ամենին: Այս ամենի արդյունքում Պողպոմոգովը ևս կորուստ էր ունենալու և այդ կորուստն էր լինելու հայ ընտանիքի խորհրդանիշ Ջվարթնոցի տաճարը՝ վեր խոյացող ամպի վրա: Նկարի կոմպոզիցիայի սկզբնամասում պատկերված է շուռ տված մարդկային գանգ, որը խորհրդանշում է «մարդը ինքն-իրեն կործանեց» ասացվածքը: Ջվարթնոցի տաճարի պատկերումը և նկարի ընդհանուր խորհուրդը մարդկային մեղքի գաղափարն էր, քանի որ ամեն մարդ ունի իր մեղքի չափաբաժինը աշխարհի կործանման ժամանակ, և եթե փորձի արժևորել իր ստեղծածը և քիչ մեղսագործել կենդանության օրոք, կպահպանի իր տունը՝ իր երկրագունդը, որը նկարիչը ամբողջական էր դիտարկում՝ առանց ազգային և կրոնական պատկանելիության: Այս տան մի մասնիկ էլ հայի տունն էր՝ Ջվարթնոցի տաճարի խորհրդաբանությամբ: Եվ հայն էլ իր մեղքի չափաբաժինն ուներ երկրագնդի պահպանման համար:

Հետաքրքիր է նաև նրա կողմից բազմիցս կիրառվող մյուս արտահայտչական և հորինվածքային կառուցումը՝ բրգաձև աստիճանավորման միջոցով և Բաբելոնյան աշտարակաշինության նմանությամբ:

«Մատաղ» կտավը ստեղծված է հեղինակի կողմից բազմիցս կիրառված այլաբանական-խորհրդապաշտական մոտիվներով, որոնք անդրադարձ են քրիստոնեական թեմային: Հորինվածքի կենտրոնում խոյի եղջյուրներ են, իսկ «Քավության նոխազը» Քրիստոսն է՝ երկնային եկեղեցին, որի ներքևում երկրային

հայկական եկեղեցի է. ընդհանուր հորինվածքը նրա խոր հավատի մասին է խոսում: Նոխազի եղջյուրների վրա վառվող մոմեր են՝ նկարչի սիրած պատկերանշաններից (Տե՛ս նկ. 6): Մոմերի լույսը և շողքը բարձրանում են երկինք: Չնայած ներկապնակը և ընդհանուր թեման դրամատիկ-ողբերգական իմաստ ունեն, այնուամենայնիվ, ամպերի խորքից երևում են արևի ճառագայթները: Նոխազի կերպարը վկայում է Քրիստոսի նահատակումը մարդկության փրկության համար: Հայոց հողի վրա վեր խոյացող վանքը հայ ազգի անմեղ զոհերի այլաբանական խորհրդանիշն է:

Նա երագում էր նկարների մի շարք ստեղծել «Արծաթե թախիժ» խորագրով, որը կզբաղեցներ ժամանակակից արվեստի թանգարանի մի ամբողջ սրահ: Այսպես էր նա տեսնում կյանքը՝ Ծնունդ, Մանկություն, Պատանեկություն, Երիտասարդություն, Կենաց ծառ, Իմաստություն, Մահ և նորից Ծնունդ: Նկարչի խոսքերով՝ կտավներին համահունչ պետք է ստեղծվեր երաժշտություն, որի հեղինակը, անշուշտ, պիտի լիներ Ռոբերտ Ամիրխանյանը: Ցավոք սրտի նրա երագանքը չիրականացավ, իսկ վարպետը մնաց այս նկարներից յուրաքանչյուրում նորածին, երիտասարդ և անմահ:

Պողպոմոզովի նկարները դիտելիս ակամա ծագում է արվեստագետի և Աստծո փոխհարաբերությունների հարցը, որ միշտ ընկած է մեծ արվեստի հիմքում: Եվ նկարիչը այդ հարցը շատ բնական համարելով՝ հաստատեց. «Իհարկե հավատում եմ Աստծուն. նա իմ մեջ է, ես՝ նրա մեջ: Առավել ևս, որ մարդն ստեղծված է ըստ Աստծո պատկերի և նմանության»: Կոմիտասի դիմանկարը ինչ-որ առումով նաև մեծ չափի սրբապատկեր է հիշեցնում: «Իհարկե, այդպես է: Չէ՞ որ իմ մի կեսը ռուս է: Հայերս սրբապատկեր չունենք, իսկ իմ մյուս կեսը Կոմիտասն է, նա էլ է սրբապատկեր, բայց և մարգարե, որ իր լույսով մտնում է ամեն մի հայի տուն այս դռան միջով», – ասաց նա ու ձեռքի շարժումով ցույց տվեց նկարի շրջանակը, որ իրոք դուռ էր հիշեցնում (Տե՛ս նկ. 2): Անվանի հայ նկարիչներից շատերն են պատկերել Կոմիտասին: Պատկերել իբրև մեծ երաժիշտ, վարդապետ, հայրենասեր մարդ: Այս ամենից զատ Վալենտին Պողպոմոզովը Կոմիտասին ներկայացրել է իբրև սուրբ: Նա օգտագործել է մուգ գույներ: Պատկերում վարդապետին ներկայացրել է իր սև սքեմով: Նկարիչը հետաքրքիր լուծում է տվել մոմի պատկերմանը: Փաստորեն մոմ չկա, չնայած առկա է անտեսանելի մոմից ճառագող լույսը: Կոմիտասի ձեռքերը նրբորեն պահում են այդ կրակը: Նրա դեմքը, փակված աչքերը արտահայտում են խորը ներշնչում և ոգեղենություն: Կոմիտասի կերպարը, որը, հայ արվեստում ցեղասպանության և անմեղ զոհերի սրբագործման և հիշատակման անմար ձոն է, նրա մոտ դարձավ «Մարգարե, լուսավորիչ, սուրբ»: Թեև մուգ շրջանակով և մռայլ գունապնակով ներկայացված է տաղանդավոր ուսուցիչը, սակայն նրա կերպարը ամբողջությամբ պարուրված է լույսով: Նա նորովի և ավելի միստիկ ներկայացրեց մեծն երգահան Կոմիտասին իր պատկերացումներից ծնված նկարում:

Սա, կարելի է ասել, Վալենտին Պողոպոնոգովի՝ Հայոց Մեծ Եղեռնի կսկիծով լցված սրտի ինքնաբուխ արտահայտությունն է: Նա կարողացավ իր այս տպավորիչ նկարներով կոտրել կարծրատիպեր, նա նոր «Կոմիտաս» է պատկերել՝ նշանավոր նկարիչներ՝ Եղիշե Թադևոսյանից, Փանոս Թերլեմեզյանից, Հակոբ Խանջյանից և Սարգիս Մուրադյանից հետո: Նկարիչը նպատակ չի դրել ստեղծելու Կոմիտասի դիմանկարը: Նա մտադրվել է Կոմիտասին պատկերելու իբրև ժողովրդի հավաքական կերպար, իբրև հայ երգի ու մշակույթի մարմնավորում ու մարմնացում՝ միևնույն ժամանակ նրան պատկերելով իբրև մեր ամբողջ ժողովրդի ապրած մեծագույն ողբերգության կրող ու հավաքական խորհրդանիշ: Հայոց պատմությանն առնչվող թեմատիկայի հետագա որոնումները նկարչին բերեցին Կոմիտասի կերպարի մեջ մարմնավորված Եղեռնի թեմային:

Պողոպոնոգովի արվեստը համամարդկային էր և տիեզերական տարրեր շատ հաճախ էին հանդիպում կտավներում: Նա այն արվեստագետն էր, ով կարողանում էր ընդհանենը մի խորհրդանիշ օգտագործելով՝ ազգի բազմադարյան պատմությունը հաղորդել դիտորդին: Նրա լեզուն թվում է բարդ, վերլուծական և փիլիսոփայությամբ լեցուն, բայց միաժամանակ մարդկային է, քննադատական և իրական՝ կապված մարդկային մեղքերի, թերությունների ու բանականության հետ: Կտավների առեղծվածային միտքը հասկանալու համար կարելի է ժամերով ուսումնասիրել, նայել տարբեր դիտանկյուններից, անգամ տարածքի լուսավորվածությունը կարող է ազդել մեզ վրա: Մոմը, զանգը, հույսի շողը նրա արվեստի անբաժանելի մասերն էին: Այս սիմվոլները կարծես նրա սեփականությունը լինեին: Նա հաճախ էր օգտագործում այս սիմվոլները մեկ կտավում, սակայն նրանք ամեն նկարում յուրովի խորհուրդ էին կրում:

Մի կտավում զանգը կարելի է ասոցիացնել մարդկային հոգու ձայնի հետ, մյուսում՝ համախմբվելու ահազանգ, մեկ այլ կտավում՝ գերբնական խորհուրդ, որը կօգնի փրկվել կործանումից: Եթե զանգի միջոցով Պողոպոնոգովը արտահայտում էր ձայն, ահազանգ, ապա մոմի միջոցով արտահայտում էր մարդու հոգին և կյանքը, որի ճիչը լսվում էր զանգի օգնությամբ և հասնում մինչև լույսը, որ նրա մյուս սիմվոլն էր՝ հավատի, հույսի, փրկության խորհրդանիշ:

Պողոպոնոգովի կտավներում կարելի է նկատել որոշակի թվացյալ հակասություն: Նա կարողանում է մեկտեղել վտանգն ու խաղաղությունը, տառապանքն ու հույսը: Նրա նկարները այնքան խորն ու առեղծվածային են, որ յուրաքանչյուրը դրանցում կարող է գտնել միայն իրեն հոգեհարազատ տարր և զգալ, որ նկարիչը հենց իրեն է ուղղել թաքնված խորհուրդը և իրենից բացի ոչ ոք ունակ չէ բացահայտել այդ գաղտնիքը՝ միայն իր ու նկարչի գաղտնիքը: Նման անհատական կապը արվեստագետի ու դիտորդի միջև հնարավորություն է ստեղծում ամբողջությամբ կլանվել Պողոպոնոգովի

տաղանդով: Յուրահատուկ կերպով նրան հաջողվում է իր արվեստում անդրադարձ կատարել հայկական ազգային տարրերին: Թվում է, թե անհնար է նկարել համամարդկային արվեստի ամենահայտնի թեմաներով և դրանցում ավելացնել նոր տարրեր, որոնք բնորոշ են միայն մեր ազգին: Սակայն Պողոսյանի հաջողվել է հայկական ազգային ոգու պրիզմայով անցկացնել այնպիսի հայտնի ստեղծագործական թեմաներ, որոնցից է, օրինակ. «Իմ մեղքը» աշխատանքը:

Виктория Василян, Эдгар Аскиджян, Картины Валентина Подпомогова по отечественным темам - В статье рассматриваются картины Валентина Подпомогова по армянской тематике. В частности рассматриваются те картины, которые связаны с Геноцидом армян 1915 года, с землетрясением и с Сумгаитской резней 1988 года. Описание нами этих живописных работ посвящается 100-летней годовщине армянского Геноцида и памяти мучеников.

Будучи редким патриотом и одаренным деятелем искусства, Подпомогов часто изображал в своих работах события, связанные с армянским народом. Ему удавалось в своем искусстве изобразить армянские этнические особенности и символы, присущие только нашему народу.

Victoria Vasilyan, Edgar Askijyan, Pictures of Valentine Podpomogov on paternal topics - The article discusses the pictures Valentine Podpomogov on Armenian topics. Especially are described those pictures, that relate to the Armenian Genocide of 1915, to the earthquake and Sumgait massacres in 1988.

The description of these paintings are devoted to 100th year of the Armenian Genocide and the memory of martyrs.

Being a patriot and a rare gifted artist, Podpomogov often depicted in his works developments related to the Armenian people. He succeeded in his art to portray the Armenian ethnic characteristics and symbols that are typical for our nation.

Վիկտորյա Վասիլյան- ԵՊՀ Հայ արվեստի պատմության և տեսության ամբիոնի դասախոս, հնագիտության և ազգագրության ամբիոնի հայցորդ:

Էդգար Ասկիջյան - "Տեխնոլոյֆ" ՍՊԸ տեխնիկական գծով մասնագետ:




Սկար 1.



Սկար 2.



Սկար 3.



Սկար 4.



Սկար 5.



Սկար 6.



Նկար 7.



Նկար 8.



Նկար 9.